ԱՐՏԱՎԱԶԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՎԱՏԻԿԱՆԸ ԷՋԱՒԱԾԻՆՆ Է

Արտավազդ արքեպիսկոպոսի սույն քարոզը, արված Պեյրութի ռատիոյեն «Վեհոն ե Լուսին»-յան և Մանվել Բ Պալեոլոգ» թեմայով դասախոսութենեն հետո, պատասխանն է Արևի. Տեր Հովհաննես Արքեպիսկոպոս Նազլյանի ռատիոյեն տված և «Ազդարար» մարտ 1-ի թվին մեջ տպագրված դասախոսության։

Ես հատկապես ընտրած էի այժմէական կարևորութենն զերծ չեղող ներկա պատմական նյութը, ցույց տալու համար թե որպիսի ճակատագրական ձախողության մատնվելու դատապարտված էրն Արևմտյան պետությանց մոտ հայկական ու հունական արքունիքներուն կատարած դիմումները, ասկե վեց դար առաջ։

Նյութիս հետ զարմանալի զուգադիպությամբ մը կարդացի, երկու օր առաջ, Նազլըյան Գերապայծառի մեկ դասախոսությունը և չկրցի երբեք ըմբռնել թե Հայ Կաթողիկե հասարակության Սրբազան Պատրիարքին, Հռոմի մեջ, օտար հողի վրա և օտար Քահանայապետն մը կարտինալական տուչությունն ու անվանումը մեր ԱԶԳԱՅԻՆ կացության նկատմամբ ինչո՞ւ պիտի կրնար բարեգուշակ նկատվիլ։ Իր նախորդներեն մեկուն՝ Հասունի 1880-ին նույնպես Հռոմեն կարտինալ անվանումը, չեմ գիտեր թե ո՞րքան բարեգուշակ եղավ մեր ազգին համար՝ որ այս մեկն ալ գառնար նույնքան բարեգուշակ։

Նմանապես ո՞չ մեկ հայու համար ըմբռնելի եղավ թե ի՞նչպես ավետաբեր և հուսատու ծիածանի մը, կամ ծիրանի գոտիի մը բարեգուշակությունը կրնար ունենալ հայազգի՝ բայց լատինամետ ու Հայաստանյայց Եկեղեցիի դարավոր ու հաստատուն արմատեն բաժնվող Հայրապետի մը ուսերուն վրա՝ օտար հայրապետարանին մեջ ձգված ծիրանազգեստ պատմուճան մը։

Սրբազան եղբա՛յր և եղբայրնե՛ր, բավական չէ՞ որ 800 երկար տարիներե ի վեր այդ միևնույն ակնկալություններով ուզեց սնանիլ անհեռատես փոքրիկ մասը մեր եկեղեցականության ու մեր ազգին, որոն ամբողջությունը սակայն՝ իր առողջ նախնիքներուն ավանդության հավատարիմ, իրեն հասած ամենեն աղետալի պահերուն ու մղած անհավասար, դյուցազնական պայքարներուն մեջ իսկ, ամենեին միտքեն չանցուց ՎԱՏԻԿԱՆԵՆ խոսելու՝ «ամեն պետություններու և ազգերու հայ անցյալ քաղաքակրթության մասին», ու միայն Ս. ԷՋՄԻԱԾԻՆՆ էր՝ որ իրեն ենթակա պատրիարքներով ու ժողովրդի իշխաններով, շատ մը պետություններու և ազգերու առջև ներկայացուց հայկական զուլումներու գրված ու չգրված գիրքը։

Ներկա Հայաստանի Խորհրդային, իմաստուն ու հեռատես պետությունը, իր «հասունացած զարգացումին ու քաղաքակրթության աստիճանին վրա», պետք չունի երբեք ՎԱՏԻԿԱՆԻ բերնով ու ծիրանազգեստ պատմուճանով, հայ հոգևորականե մը ներկայացվելու ամերիկյան և եվրոպական պետություններու։ Հայ եկեղեցին վերին հոգևոր տերն ու Հայ Ազգին Լուսավորչաշավիղ Հայ-

բապետը անցյալ 1945-ի մարտին, վրան առանց ծիրանի զգեստ ու պատմուճան և շքեղ պատվաստիճաններ կրելու, այլ սև կապայով մը ու սև վեղարով մը՝ կոչեցին միայն Ստալինյան շքանշանը, Քրեմլի պալատին մեջ, ժամանակակից ազգերու և պետություններու կարգին՝ իր փառավոր, անանման ու դյուցազն տեղը դրավող Խորհրդային Միության հայասեր ու մարդասեր ներկայացուցիչ՝ Սպարապետ Ստալինի առջև, պատմական ունկնդրության մը երջանիկ պահուն, ո՛չ միայն Սովետական Մեծ Պետության ու նաև բովանդակ մարդկության «հայ ՓՈՔՐ պետության» ընծայած ռազմական ՄԵԾ ծառայությունները պարզեց, այլև հանուն Հայաստանի և արտասահմանի բովանդակ հայության, արդարություն և իրավունք խնդրեց, դարմանելու համար դարերի ի սեր հայոց եղած անիրավությունները և պաշտոնական խոստում ստացավ, պետք չձգելով ամերիկյան և եվրոպական ազգերու և պետություններու հայոց անունով ՎԱՏԻԿԱՆԵՆ խոսելու. վասն զի հայուն միակ Վատիկանը Ս. Էջմիածինն է։

Հայության միասնականությունը, անցյալ տարվա հունիսին, անգամ մըն ալ պայծառորեն ապահովուեցավ Հայաստանի Հոգևոր Մայրաքաղաք Ս. Էջմիածնի դարավոր Մայր-Տաճարի լուսաշող կամարներուն տակ։ Դարձյա՛լ կուզվի հայուն դատը երկճյուղ ու երի՛ք ճյուղ անհաջող կերպով ներկայացնել, ինչպես դժբախտորեն եղավ 1919-ին ու 1920-ին, Փարիզի ու Լոնդոնի մեջ, հայուն կարծեցյալ «անմիաբանությունն»-ը ծաղրի առարկա դարձնելով օտար պետություններու առջև։

Տեղը չէ՞ միթե հարցնելու թե ի՞նչ արդյունք ունեցան ԺԳ և ԺԴ դարերու երբեմնի մասնակի ու փառատենչ դիմումները Եվրոպայի կրոնական ու աշխարհիկ պետություններու և ազգերու մոտ, որոնց ոտիեն ընթանալ կուզուի ԱՅՍՕՐ ալ, անհեռատես ու ձախորդ մտայնությամբ մը։ Ի՞նչ է գաղտնիքը «ծիրանազգեստ պատմաստիճաններու շքեղությամբ» Վատիկանի պալատներու մեջ երևալուն ու ՄԻՔԱՅԵԼ ԱՆՃԵԼՈՒ խոսուն նկարներով հարուստ կամարներու տակեն, ՍԻԿՈՏՅԱՆ մատրան մեջ հայկական պատարագի մատուցումին, ԵԿՄԱԼՅԱՆ քառաձայնով, երբ ուիթը ամիս առաջ հայ ազգի բանաստեղծ ու նկարիչ ՆԱՂԱՇ ՀՈՎՆԱԹԱՆԻ խոսուն որմանկարներով ու սեղանազարդ անստդյուտ մանրանկարներով հարուստ Ս. Էջմիածնի քրիստոսահիմն անանման Մայր-Տաճարի մեջ, Եկմալյան քառաձայն Ս. պատարագով, տեղի ունեցավ, բոլորիս ներկայության հայրապետական և օծման փառավոր հանդես, անհամար հայ հավատացյալներու հուզումին, հույսին ու ուրախության մեջ։

Մենք բոլորս, Կաթողիկոս, Պատրիարք, Եպիսկոպոս, Վարդապետ, Քահանա ու աշխարհիկ պատգամավորներ, ուխտով ու տեսիլքով, մեր հարազատ ՄԱՅՐԸ ու մեր նվիրական հայրենիքը տեսնելու գացինք, մեր Լուսավորչին ՄՈՐԸ աչը համբուրելու։ Կարելի՞ էր հարցնել թե ուրիշներ, մեզմե հետո, Ո՞ՒՐ գացին և ՈՐՈ՞Ի աչը համբուրելու և «Կարտինալական խաչգտակ, Թիկնոցակ և Ծիրանագույն գտակ» ստանալու, երբ մենք ՄԵՐ ՄՈՐԸ տունը թողուցինք մեր սև գտակներն ու կապաները։

Հայաստանի ամբողջական ընագավառին և իրավունքներուն վերստացումը Կարտինալական դիրքերը չէ՞ որ պիտի ապահովեն, «ազգային տեսակետով իբր աշխարհի ԿՈՉ մը», այլ համաշխարհային վեցին պատերազմի բաղմաթիվ դաշտերուն վրա իրենց հերոսի արյունը տվող հայ ռազմիկներու և հայ զորապետներու հոգիին լուռ ԿՈՉԸ...։

Սրբազան եղբա՛յր ու եղբայրնե՛ր, «Հայուն պատմության հոլիզոնը» վաղուց «շառագունած է» ու մեր ապագայի պայծառ աստղն ու արևը՝ արդեն իսկ փայլուն։ Մեզի կը մնա ՄԻԱԿԱՄ սիրով ու հավատքով անձամբ ողջունել այդ արևը, լուսախորհուրդ Արարատի և Լուսավոր Ս. Էջմիածնի հովանիին տակ, երախտագիտությամբ փառավորելով Աստուծո անհասանելի կամքը, հավիտյանս հավիտենից. Ամեն։